

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

----- 2015 թվականի N -----Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
30-Ի N 420-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 30-ի «Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ընտրության և նրա մոտ բնակչության գրանցման կարգը հաստատելու մասին» N 420-Ն որոշման հավելված N 1-ում (այսուհետ՝ հավելված N 1) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հավելված N 1-ի 11-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) լրացել է ԱԱՊ բժշկի կողմից սպասարկվող բնակիչների առավելագույն թույլատրելի թվաքանակները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ բնակիչը տվյալ համայնքի սահմաններում այլընտրանքի բացակայության պատճառով չի կարող ընտրել այլ ԱԱՊ բժշկի,»,

բ. 3-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ ենթակետ.

«4) բնակիչը տվյալ օրացուցային տարվա ընթացքում արդեն մեկ անգամ փոխել է իր ԱԱՊ հաստատությունը՝ բացառությամբ բնակչի կողմից իր մշտական բնակության վայրը փոխելով պայմանավորված ԱԱՊ հաստատությունը փոխելու դեպքերի:»,

2) հավելված N 1-ի 15-րդ կետը 3-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ ենթակետով.

«4) տվյալ տարվա ընթացքում բնակիչը կարող է միայն մեկ անգամ փոխել իր ԱԱՊ հաստատությունը: Սույն սահմանափակումը չի տարածվում բնակչի կողմից իր մշտական բնակության վայրը փոխելով պայմանավորված ԱԱՊ հաստատությունը փոխելու դեպքի նկատմամբ:»,

3) հավելված N 1-ի 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18. Բնակիչն իրավունք ունի առանց պատճառների բացատրության նույն ԱԱՊ հաստատությունում ցանկացած ժամանակ փոխելու իր ԱԱՊ բժշկին և ընտրելու նոր ԱԱՊ բժիշկ, իսկ այլ ԱԱՊ հաստատությունում աշխատող ԱԱՊ բժշկի մոտ բնակչի տեղափոխումը կարող է կատարվել.

1) օրացուցային տարվա ընթացքում մեկ անգամ՝ առանց պատճառների բացատրության,

2) բնակչի կողմից մշտական բնակության վայրը փոխելու դեպքում:»,

4) հավելված N 1-ը 18-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 18.1-րդ կետով՝

«18.1 Եթե ԱԱՊ բժիշկն, անկախ պատճառներից, չի կարող սպասարկել իրեն ընտրած բնակչին (աշխատանքից ազատվելու, մահվան կամ օրենքով սահմանված այն դեպքերում, երբ ԱԱՊ բժիշկը դատական կարգով զրկվել է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից), ապա ԱԱՊ հաստատության տնօրենի կողմից տվյալ ԱԱՊ բժշկի մոտ գրանցված բնակիչները ժամանակավորապես կցվում են տվյալ ԱԱՊ հաստատությունում աշխատող այլ ԱԱՊ բժշկին կամ բժիշկներին՝ մինչև բնակչի կողմից սույն կարգով ԱԱՊ բժշկի ընտրությունը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ԱՐԻԱՀԱՄՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 30-ի N 420-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

1. Նախագծի անհրաժեշտությունը (նպատակը)

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 30-ի N 420-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ԱԱՊ ծառայություններ մատուցող բուժհաստատություններում բնակչության բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման գործընթացը կանոնակարգելու անհրաժեշտությամբ:

Նշված որոշման մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը հնարավորություն կընձեռի կանոնակարգել և հստակ սահմանել այն դեպքերը, երբ քաղաքացին կարող է փոխել իր ԱԱՊ բժշկին և ԱԱՊ հաստատությունը:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 30-ի «Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ընտրության և նրա մոտ գրանցման կարգը հաստատելու մասին» N 420-Ն որոշման, ներկայումս բնակիչը տարվա ընթացքում ցանկացած պահի, առանց հիմնավորման և որևէ սահմանափակման, կարող է փոխել իր ԱԱՊ բժշկին և ԱԱՊ հաստատությունը: Այդ կապակցությամբ գործնականում առաջանում են խնդիրներ՝ կապված քաղաքացու կողմից տարվա ընթացքում ԱԱՊ հաստատության հաճախակի և անվերահսկելի փոփոխությունների հետ, ինչը դժվարություններ է ստեղծում ինչպես ԱԱՊ հաստատությունների, այնպես էլ ՀՀ առողջապահության նախարարության՝ որպես պետական պատվեր տեղադրող և ֆինանսավորող մարմնի, աշխատանքների կազմակերպման առումով: Այս առնչությամբ Երևանի

քաղաքապետարանի առողջապահության վարչության կողմից առաջարկվել է կանոնակարգել ԱԱՊ բժշկի ընտրության գործընթացը, քանի որ բնակչի կողմից տարվա ընթացքում առանց դեպքերի սահմանափակման ԱԱՊ հաստատություն փոխելը խնդիրներ է առաջացնում բնակչին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով և ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված ծավալներով բուժօգնության լիարժեք և անհրաժեշտ որակով ապահովման տեսանկյունից:

3. Կարգավորման նպատակը և բնույթը

Որոշման նախագծի ընդունման նպատակն է այն դեպքերի հստակ սահմանումը, թե քաղաքացին երբ և ինչ կարգով կարող է փոխել ԱԱՊ հաստատությունը և ԱԱՊ բժշկին, ինչը կնպաստի բնակչությանը տրամադրվող բուժօգնության որակի բարելավմանը և արդյունավետ առողջապահական ծառայությունների մատուցման ապահովմանը:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագծի մշակմանը մասնակցել են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի պետական առողջապահական գործակալության աշխատակիցները՝ ՀՀ առողջապահության նախարարի մարտի 3-ի թիվ 484-Ա հրամանով ձևավորված աշխատանքային խմբի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա:

5. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Իրավական ակտի ընդունման արդյունքում լրացուցիչ կհստակեցվի և կկանոնակարգվի բնակչի կողմից ԱԱՊ հաստատության և ԱԱՊ բժշկի ընտրության գործընթացը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Նախագծի ընդունելու կապակցությամբ պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 30-ի N 420-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում փոփոխություններ չեն սպասվում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 30-ի N 420-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանա:

**ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ՝**



ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ